մօտից. անցնում է Ծաղկի, Բար, Կորսելիֆ, Ահար, Մոխրուքաղ, Նիխալ, Սամսոն, Կալադիբի գեղերից, աւերակ Թուէր բերդից, միանում է Թորդում վտակին, Մեղրագոմից երեք կիլոմետր դէպի հիւսիս: Կաղարիս առ-ը աջից ընդունում է Փէքխակ Աղասար Վ. եւ Ն., Լեսկի, Ագրակ, Ախնաձոր առ-ը, համանուն գեղերից, որոնք ոռոգում են բոլոր հանդաստանը մինչեւ Թորդումի միանալը. ապա ձախից ընդունում է նոյնպէս Կերեսելիֆ, Շիփակ, Էրքիկ, Զիրիլ առ-ը, որոնք ոռոգում են համանուն գեղերը իրենց բաժանումներով: Թորդում վտակը դէպի հիւսիս ուղղուելով՝ աջից ընդունում է Քիշխա դուռը, Քսխա[1], Աբերնես, Աբերնեսի դուռը, Թարքար, Ընկուզէֆ, Ազորդ, Էշկիձոր, Օքխա, Իսս կամ Իսոս առ-ը մինչեւ Թորդում լճին հասնելը, որոնք ոռոգում են համանուն գեղերը իրենց բաժանումներով: Այս բոլոր գեղերն ունին իրենց ամրոցները, ճարտարապետական տաճարները. նշանաւոր են Ընկուզէֆի բերդը եւ աւերակները:

Թորդում վտակը Մեղրագոմն անցնելուց յետոյ, ձախկողմից ընդունում է Վարչին, Սխտորոտ, Վանֆ (Մեծամօր), Էգրակ, Կիսխա[1] (Քսխա), Զուրմանէմ, Խայ (Հայ),

---

1 Ցարօրինակ են Թորդում լճի արեւելեան եւ արեւմտեան այս կրկնակի Քսխա կամ Քիշխա գեղերը իրենց հռչակաւոր դռներով մէկը հարաւում՝ արեւմտեան Քսս-